



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻՒ 32.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ 'ԺՈՂՈՎ ՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԵՐԵՍՈՒՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԳ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԲ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871

ՆՈՒԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊՍՏՐԻՍՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖ.

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն նորընտիր Երեսփոխանաց :
- 2° Ընտրութիւն Ազգ. Վարչութեան Կրօն. Ժողովոյ :
- 3° Ատենական կանոնադրութիւն :
- 4° Համարատուութիւն Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ :
- 5° Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Գլուխ Ա :
- 6° Կեդրոնացումն եւ Ապակեղրոնացումն :
- 7° Տեղեկագիր Գաւառական հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովոյ :

Ատենը բացուեցաւ ժամը 8 ին 'ի ներկայութեան 42 երեսփոխանաց, որոց թիւը վերջէն 60ի յանդեցաւ :

Ատենապետ էֆ. յայտնեց ժողովոյն որ թէպէտ իրաւունք չ'ունէր Ատենապետութեան օրինակ բազմիլ, ըստ որում մէկ քանի շարաթի միջոց վիճակաւ երեսփոխանութենէ դադարեալ ըլլալով՝ ատենապետական պաշտօնէ ալ դադարած էր բնականաբար, սակայն ֆոխատենապետ էֆ. այս մասին նախորդ նստի ըրած որոշումը իրեն հաղորդած ըլլալուն՝ երկար խօսակցութեան իր կողմէն տեղի չը տալու համար կ'ընդունէր առժամանակեայ կերպով միայն վարելու ատենապետութեան պաշտօնը :

Ատենապետ էֆ. յարեց թէ՛ Մէրեէմ-Գուլի Յարութիւն էֆ. վերահաս հիւանդութեամբ մ'արգիլեալ է այսօրուան նստին ներկայանալէ

եւ թէ՛ ըստ որում յիշեալ էֆէնտին միակ Ատենապետ ընտրուող Գլուխ Ժողովոյ Կրօնական մէջ՝ Ժողովն առօրեայ Ատենապետի մը պէտք ունի, ուստի եւ հրաւիրեց զՄելիքեան Եղիազար էֆ. ելնել 'ի Կրօնական ատենապետական պաշտօն վարելու :

Հուսկ ուրեմն Ատենապետ էֆ. հիւանդութեան եւ ուղեւորութեան պատճառաւ ժողովէն բացակայ գտնուող երեսփոխանաց աւուաններն կարգաց եւ Ղօնչէկիւլեան Յովհաննէս էֆ.ի հրաժարագիր մ'ուղղած ըլլալը յայտնեց. բայց դեռ եւս մեծագոյն մաս գոյացած չըլլալուն՝ ետքի թողուց զայն եւ անցնելով օրուան կարգին, նախորդ ԼԱ. նստի Ատենապետութեան վրայ 'ի դիտողութիւն հրաւիրեց ժողովն :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆԹԱՑ ԼԱ. ՆԱՍԻ

ՊԵՆՏԱՆ Թ. ԷՑ. — 467դ. Երեսի առաջին սիւնակին մէջ երեք առողով ամփոփուած խօսքերէս այնպէս կը հասկցուի որ՝ առանց մեծագոյն մասի ներկայութեան ընտրութեան տեղեկագրոց եւ հրատարակողոց ընթերցումը պահանջած ըլլամ, սակայն իմ խօսքս անոր հակառակն էր։ Գարձեալ 487դ. երեսի երկրորդ սիւնակին մէջ «Քաղ. ժողովն առանց իւր պաշտօնին տեւողութեանը համար պայմաններ դնելու» խօսքը պէտք է ըլլայ՝ «Քաղ. ժողովն, առանց ճշման ենթարկելու Ընդ. ժողովը, պայման դնելով Սահմանադրութեան վերաքննութեան մինչեւ մայիս 1 կատարուիլը, կրնայ մինչեւ այն ատեն կատարել իւր պաշտօնը»։

Գարձեալ 492դ. երեսի առաջին սիւնակի մէջ նշանակուածին պէս Օգոստէն էֆ. ի դէմ չեմ բողոքած, քանզի իրաւունք չունէի, այլ Ատենապետ էֆ. ի դէմ, որ քուէարկելու իրաւունք չունէր։ Գարձեալ նոյն երեսի երկրորդ սիւնակի մէջ խօսքերս պիտի ըլլան «Այո՛, կը կրկնեմ եւ կը սնդեմ թէ՛ Գիւանի ըրածը բռնութիւն ու անիրաւութիւն մ'է՛, կը պահանջեմ որ՝ այս քօսքերս Ատենադրութեան մէջ արձանագրուին»։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Պէկեան էֆ. ի այս ըսածներուն վրայ դիտողութիւն ընող չըկայ մի. եթէ Պէկեան էֆ. անցեալ ատենին այս խօսքերը ըսած է, Գիւանին կողմէն ալ ՚ի կարգ հրատարակուած ըլլալու է, չը հրաւիրուեցա՞ւ մի. եթէ ոչ, իմ այս դիտողութիւնս պէտք է որ արձանագրուի այժմ։

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — 490դ. երեսի Բ. սիւնակին մէջ իմ խօսքերուս վերջերը «Ես կ'աղաչեմ որ յաջորդ նստին մնայ խնդիրը» նշանակուած է. բայց «կ'աղաչեմ» բառին տեղ «կ'առաջարկեմ» ըսած եմ։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐՔԱԶԱՆ. — Ես ալ դիտողութիւն մ'ընեմ, որ ըլլայ դիտողութիւն դիտողութեանց. խիտա քիչ կը գտնուին այնպիսի յիշողութեան տէր մարդիկ որ տանը հինգ օր առաջ ըսած խօսքերնին բառ առ բառ ճշգրիտ յիշեն. մարդս շատ անգամ պարզ ըսած խօսքը կը մոռնայ, ուր կը մնայ բառերը յիշելու եւ քանի որ դրութիւն մը չը կայ դիտողին ձեռքը՝ որ վկայէ իր ըսածներուն ճշմարտութիւնը, այնպէս որ կ'առաջարկեմ ըսեր է, թէ

կ'աղաչեմ, վկայն ինքն է, կարելի չէ՞ որ սրբագրելի խօսք մը կամ բառ մը սպրդած ըլլայ բերնէն եւ յաջորդ նստին սրբագրելու ուղի եւ մենք հոս պարտաւորեալ մնանք պարզապէս ընդունելու. ուստի ըստ իս ասանկ սրբագրութիւն չըլլար, ասոր մէկ ուրիշ ճարը մտածելու է։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Սրբագրան Հայր, Գիւանի կողմէ տրուելիք պատասխանը եթէ բաւական համարիք ձեր այդ խօսքին համար, կը յայտնեմ թէ՛ անտարակոյս շատ աղէկ կ'ըլլար եւ ձեր այդ փափաքը լիովին կատարուած, եթէ սղագրութեան եղանակ մը մեր մէջ ունենայինք, որով բառ առ բառ նշանակուէին ատենաբանութիւնը. ուրախութեամբ կարգացի այս օրերս լրագրաց մէջ որ՝ ազգային մը հրաւէր կը կարգայ սղագրութիւն սովորեցնելու, եւ կը յուսամ որ արդէն մեր դիւանագրայինները այս փափաքելի եղանակին վարժութեան ձեռնարկած են։ Բայց մինչեւ այն օրն ուր այս դրութիւնը մեր մէջ մտնէ, ուրիշ բան չէ կարելի ընել, այլ ատենախօսութիւնները խումբադրել համառօտիւ՝ ճշգրիտ ամփոփելով իմաստները. զի անշուշտ կարելի չէ մեր արդի ընթացքով բառ առ բառ մէջ բերել ատենախօսութիւնները։ Եւ ձեր յառաջ բերած օրինակին վրայ խօսելով, թերեւս Օգոստէն էֆ. «կ'աղաչեմ» ըսած ըլլայ եւ վերջէն սրբագրելու գեղեցիկ «կառաջարկեմ» փոխած, ասի մեր կողմէ իբր լոկ դիտողութիւն կը համարուի եւ ըստ այնմ կը նշանակուի ատենագրութեանց մէջ, ինչպէս որ սովորութիւն եղած է մինչեւ այսօր։ Թէպէտ ձեր Սրբագրութեան դիտողութիւնը խիստ իրաւացի է, այլ ուրիշ կերպով չենք կրնար ընել։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐՔԱԶԱՆ. — Անցեալ մէկ նստի մէջ, ուր դուք ներկայ չէիք, խնդիր յուղուեցաւ թէ՛ դիտողութիւնը գրով ուղղուին Գիւանին. կարծեմ այս աւելի լաւ միջոց մ'է։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Յանձնաժամ խօսողին եւ դիւանին մէջ դատաւոր մ'ալ պէտք է. մանաւանդ որ գրով տալը ժողովոյ մէջ խօսելէն մեծ տարբերութիւն ունի, եթէ խօսողը իր առջի ըսածը ետքէն յերիւրելու ուղի՛ աւելի դիւրաւ կ'ընէ դայդ գրով, քան թէ բերնով 50-60 երեսփոխանի ներկայութեան։

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Խօսք կ'ուղեմ։
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Այս խնդրոյն վրայ խօսք չեմ կրնար տալ եւ ոչ մէկու, եթէ ուրիշ մը

առաջարկէր եւ յուզէր այս խնդիրը, չէի պատասխաններ իսկ. այլ Սրբագրան Հօր ամենուս պարտքն եղած մասնաւոր ակնածութիւնը միայն զիս պարտաւորեց պատասխանելու։

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Աէկ բառի վրայ դիտողութիւն ընելով չէի յուսար որ դիտողութեանս վրայ այսչափ դիտողութիւններ ըլլային։

Գիտողութիւնները վերջ կը գտնեն. Ատենապետ էֆ. ներկայութեան առեւարէն քաղելով 32 անդամոց ներկայութեամբ մեծագոյն մասի գոյացումը, քուէի կը գնէ եւ ընդհանուր հաւանութեամբ ընդունած կը հրատարակէ նախորդ ԼԱ. նստի Ատենագրութիւնը. եւ կ'անցնի օրուան կարգին։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Թէպէտ խնդրոց մէջ առաջինը նորոնտի երեսփոխանաց վաւերացումն է, սակայն Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ Գիւանին վրայ գրութիւն մը չ'եմ գտնելու. ուստի կ'անցնիմ այս խնդիրն, որու կը յաջորդէ անմիջապէս կրօն. ժողովոյ ընտրութիւնը. եւ այս խնդրոյն վրայ կը հրաւիրեմ ժողովոյ դիտողութիւնը։

ԽՈՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Քանի մը նիստերու մէջ Սրբագրան նախագահին բերնէն լսեցինք, թէ տարի մը տարիուկէսէ ՚ի վեր առանց կրօն. ժողովոյ կրցաւ կրօնական գործերը հոգալ, հետեւապէս կարծեմ որ կրնայ այսպէս շարունակել քանի մը շաբաթ եւս. ուստի այդ խնդիրն այնչափ ստիպողական չէ եւ կրնանք առ այժմ ետ թողուլ, քանի որ մենք այնպիսի կենսական խնդիր մ'ունինք՝ որ ժողովոյ բոլոր ժամերն իրեն զբաւելու իրաւունքն ունենալով՝ ժամ յառաջ որոշման եւ լուծման կը կարօտի, եւ այն է Գաւառական հարստահարութեանց խնդիրը։ Եթէ ծառայութիւն մ'ունինք Տէրութեան եւ Ազգին մատուցանելիք՝ ահա ճիշդ ժամանակն է հիմայ. Ուստի կ'առաջարկեմ որ այս տեղեկագրին քննութիւնն այսօրուան յուղուելիք խնդրոյ մէջ առաջնութիւն ունենայ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Օգոստէն էֆ. ի խօսքերը կը կրկնեմ։

ԶԱՐԴԱՐԵԱՆ Գ. ԷՑ. — Ըստ իս Սահմանադրութեան վերաքննութիւնը պէտք է առաջանցնի. ամենքնիս ալ կը ճանչնանք եւ կ'զգանք ասոր կարեւորութիւնը, եւ չ'եղաւ նիստ մը, որ այս խնդրոյն վրայ չը խօսուէր եւ որ դժբաղ-

դարար ամեն նստի մէջ խնդրոց վերջը կը մընար Ըսել չ'եմ ուղեր որ ուրիշ խնդիրները նուազ կարեւորութիւն ունին, բայց, ըստ որում Սահմանադրութիւնը Ազգին հողին է, եւ մեզի համար ամեն խնդրոց առաջնութեան արժանի, ուստի գէթ ժողովոյ ժամերուն կէտը այս խնդրոյն յուղմամբը սպասի։ Կ'առաջարկեմ ուրեմն որ՝ ժողովոյ ժամերը երկու մասի բաժնուին, որուն մէկ մասը Սահմանադրութեան վերաքննութեանը սահմանուի, եւ միւս մասն ուրիշ կարեւոր խնդրոց։

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՑ. — Անցեալ նստի մէջ որոշուեցաւ որ՝ այս նստին առաջին խնդիր՝ կըրօնականը պիտի լինէր, եւ մեր ձեռքը տրուած խնդրոց կարգն ալ այսպէս կը ցուցնէ։ Ուստի ես՝ ինչպէս նաեւ, կարծեմ, բոլոր երեսփոխանք՝ այս խնդրոյն վրայ պատրաստուած եւ կանք եւ ըսելուցանք հոս՝ ի՞նչու կը խոտորինք այս կարգէն։ Ես չեմ ըսեր որ ուրիշ խնդիրներ նուազ պիտանի են, գուցէ առաւելութիւն ալ ունենան, բայց միթէ կարօ՞ղ եմ ես գիտնալ թէ՛ Գիւանը հակառակ իր կարգադրած խնդրոց կարգին՝ այս կամ այն խնդիրն պիտի յուզէ, որ ըստ այնմ պատրաստուին։ Պէտք է ուրեմն թէ՛ մենք մ'ր խնդրոց վրայ որ չ'առաջատուած ենք՝ անոր վրայ խօսինք. յանաւանդ որ Գաւառական հարստահարութեանց տեղեկագիրը դեռ այսօր ձեռքս հասաւ, որով վրայ ակնարկ մ'անդամ չեմ ձգած, որպէս զի ուսանէի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Երեք տեսակ առաջարկութիւն եղաւ, երկրորդը չը կայ։

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Ց. ԷՑ. — Ես ալ կ'առաջարկեմ ՚ի մի ամփոփել երեք պաշտօնակցացս՝ առաջարկութիւնը. Մարկոս էֆ. ի հետ ձայնակցեցով, որու դիտողութիւնը իրաւացի է, սկսինք նախ կրօն. ժողովոյ ընտրութեան խնդրէն, խօսելու առաջնութիւնը Մարկոս էֆ. ին թողուլ եւ կարծեմ որ այս խնդիրը ժողովոյն ժամերը չը վասնէր։ Յետոյ կ'անցնինք գաւառական հարստահարութեանց տեղեկագրին քննութեան, ինչպէս կ'առաջարկէ Օգոստէն էֆ. որով ժողովոյն կէտը վաճառուած կ'ըլլայ, որու միւս մասը կրնանք Սահմանադրութեան վերաքննութեան պահել, ըստ առաջարկութեան Չարդարեան էֆ. ի։

ԱՐԵԱԿ Յ. ԷՑ. — Գաւառական հարստահարութեանց տեղեկագիրը այսօր դեռ պահ մ'առաջ ձեռքերնիս հասաւ, ուստի ձայնակցելով

Մարկոս էֆ. ի արդարացի դիտողութեան կը կրկնեմ թէ այդ խնդրոյն վրայ չ'ենք պատ-
րաստուած: Սակայն յուզուելիք խնդրոյն դա-
լով ես կ'առաջարկեմ որ Ատենական կանո-
նադրութիւնը յուզուի եւ հաստատուի, ուր-
կէ կախուան ունի մեր բոլոր յուզելիք խնդ-
րոց կանոնադրութիւնը:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առաջարկութիւնները շատ-
ցան, սակայն ասոնցմէ մէկը խիստ ստիպողա-
կան ցուցուեցաւ, այն է Գաւառական հարըս-
տահարութեանց տեղեկագրի խնդիրը, զոր Օգ-
սէն էֆ. այսօր յուզելու համար զօրաւոր
պատճառ մը ցոյց տուաւ, միւս կողմէ հաւա-
սար զօրաւոր պատճառ մը մէջ բերուեցաւ,
որ կ'ըսեն թէ դեռ այսօր ձեռքբերին հասաւ
եւ դեռ ուսած չեն զանի. Ժողովին կը մնայ
որոշել: Որոշելու կէտը սա է. այս խնդիրն
այսօր կրնա՞յ եւ պէ՞տք է յուզուի, թէ ոչ. եթէ
այսօր յուզուիլը որոշուի, տաշակոյս չը կայ որ
ամեն խնդրէ առաջ պիտի լանցնի:

(Ա.Վ.Ն. Կ.Պ.Ք. — 21, 22)

ԱՐՇԱԿ Յ. ԷՖ. — Կարծիք չ'ենք կրնար յայտ-
նել, վասն զի չ'ենք գիտէր թէ՛ այսօր յուզ-
ուելու եւ առաջնութիւն ունենալու չափ ըս-
տիպողականութիւն ունի: Ես կ'ըսեմ թէ՛ Գի-
ւանն ընդ Քաղ. Ժողովոյ որոշէ այս կէտը:

Տ. ՂԵՒՈՆԻ ՎՐԴ. — Գաւառական հարըս-
տահարութեանց խնդիրը կենաց եւ մահու խն-
դիր է, ուստի կ'առաջարկեմ որ անմիջապէս
այն յուզուի:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — Յիրաւի Գաւառական
հարստահարութեանց խնդիրը առաջին է, եւ
պէտք է որ վաղ ընդ փոյթ այդ խնդրոյն վերջ
տանք մեր գաւառացի եղբարց ողբոց եւ ցա-
ւոցը վերջ տալու համար. զի անոր լուծումը
Ընդ. Ժողովոյ պատկը պիտի լինի: Սակայն
կրօն. Ժողովոյ ընտրութեան խնդիրը նախորդ
նստէն թերի մնացած եւ խօսելու առաջնու-
թիւնը Մարկոս էֆ. ի արուած ըլլալով նա-
խորդ նստի որոշումը կանոնադրութեամբ
յարգելու համար, կը ձայնակցիմ Սուսուֆեան
էֆ. ի հետ եւ կ'առաջարկեմ որ խօսքը Մարկոս
էֆ. ի տրուի զի այս խնդրոյն վրայ պատմաբա-
նօրէն ճառելու համար առաջին խօսքը իրեն
տալու խոստումնք եղած է:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը ատոր վրայ չ'է:
Այսօր Գաւառական հարստահարութեանց խնդ-
րոյն վրայ պիտի խօսի՞նք թէ ոչ. ահա խն-
դիրը:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Մենք ի՞նչպէս պի-
տի կարենանք քննել այսօր, քանի որ պատ-
րաստուած չենք: Այդ խնդիրը՝ որ դարման-
ներ կը պարունակէ իր մէջ կրնայ մեր քանի
նիստերը ժամավաճառ ընել, առանց արդիւնք
մի արտադրելու, զի մենք չենք կարող դարման
ցոյց տալու. ուստի կ'առաջարկեմ թողուլ զայն
Քաղ. Ժողովոյ՝ որ կարող է դարման խնդրել Բ.
Դռնէն:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — (Ա.Վ.Ն. Կ.Պ.Ք. Բ.Պ.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.)
Երեսփոխանական Ժողովը հաստատուած օրէն
այսպիսի ծանր այսպիսի փափուկ եւ ամենուս
սիրտը թրթռացնող խնդիր մը չ'է ներկայացած
Ժողովոյս. կրնամ աւելցնել թէ ոչ երբէք խն-
դիր մը այսպէս յարմար ժամանակի մէջ ներ-
կայացած չ'է: Բան մը կայ որ միշտ ու ամեն
գործողութեան մէջ պէտք չ'է մարդու ուշա-
դրութենէն վրիպի. այն է ժամանակի յարմա-
րութիւնը: Մարդիկ որչափ խելքով գործեն, որ-
չափ աշխատին, պարագայից զօրութիւնը աւե-
լի մեծ է մարդոց ջանքէն. խելացին այն է՝ որ
պարագաներէն օգուտ քաղել զիտէ: Այս է ա-
հա անոնց միտքը՝ որ Յանձնաժողովին տեղե-
կագիրը առաջին խնդիր ընել կ'առաջար-
կեն, այսինքն անմիջապէս յուզել: Ես այս ա-
ռաջարկութեան բոլորովին համամիտ եմ: Ըսող-
ներ կան թէ տեղեկագիրը ուշ առած են եւ
չեն պատրաստուած անոր վրայ. սակայն չէ՞
թէ արդեօք քանի տարիներէ ի վեր ամենուս
ականջները լըցված են այդ տեղեկագրին պա-
րունակութիւններովը. ի՞նչ բան կայ այդ տե-
ղեկագրին մէջ որ նոր ըլլայ մեզի համար. տե-
ղեկագիրը ստուգելով հաստատած է միայն ինչ
որ օրագիրներու մէջ կարդացինք այնքան ան-
զամ: Ես կը կարծեմ թէ այնպիսի պատեհութիւն
մը կայ այսօր առջեւնիս՝ որ միւս նկատում-
ները երկրորդական կը մնան անոր քով: Տէ-
րութիւնը կ'ուզէ եւ ամեն օր կը յայտարարէ
թէ՛ գաւառական Արշութեանց մէջ ինչ յոռի
բան որ կայ՝ ուղղել կը փափաքի. բայց նախ
եւ առաջ լաւ մը տեղեկանալ կ'ուզէ իրաց
վիճակին ամեն պարագայիք, եւ այս նպատա-
կաւ քննիչներ ղրկել որոշած է Գաւառները,
ինչպէս կարդացինք օրագրաց մէջ: Արդ մեր
տեղեկագիրն ալ մի եւ նոյն նպատակին կը ծա-
ռայէ. Տէրութիւնը շնորհակալութեամբ պիտի
ընդունի մեր տուած տեղեկութիւնները, ո-
րոնք մեր Առաջնորդներուն ձեռքով մեր Պատ-
րիարքարանին ձեռքով առնուած ու յատուկ

Յանձնաժողովով ստուգուած քննութիւններ են
կը տեսնէք որ այս տեղեկագիրը՝ որ գուցէ
ասկէ առաջ դժկամակութեամբ ընդունուէր
այսօր գոնուակութեամբ պիտի ընդունուի:

(Ա.Վ.Ն. Կ.Պ.Ք. — 22, 23, 24, 25, 26, 27, 28)

Ատենապետ էֆ. իւր ավտոն գառնալով քը-
ւէի կը դնէ այսպէս՝ « Գաւառական հարըս-
տահարութեանց տեղեկագիրն՝ Ժողովն այսօր
քննութեան պիտի առնուի թէ ոչ: Ժողովն ընդ-
հանուր հաւանութեամբ կ'որոշէ անոր քննու-
թիւնը: »

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դեռ մէկու մը խօսք չը
տուած կ'ուզեմ վիճարանութեան կարգին եւ
եղանակին վրայ խօսիլ: Տեղեկագիրը երկու
մասերու բաժնուած է. առաջինն մէջ գան-
գատները կը պարունակին, իսկ երկրորդը ա-
նոնց դարմանները ցոյց կուտայ: Առաջին մա-
սը չ'եմ կարծեր որ վիճարանութիւն վերցնէ.
եթէ չափազանցութիւն կամ պակաս տեսնուի
միայն զայն ցուցնելու է. գալով երկրորդին
այն է դարմաններուն՝ կ'ըսեմ եւ կ'առաջար-
կեմ որ՝ մի առ մի պէտք է վիճարանները ա-
նոնց վրայ: Կը հարցնեմ արդ թէ՛ Է.Մ. մասին
վրայ դիտողութիւն ընող կա՞յ:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Տեղեկագրին մի ան-
գամ հրապարակային ընթերցումէն ինչ որ կա-
րող եղայ ըմբռնել՝ անոր վրայ պիտի խօսիմ. ըստիս
այդ տեղեկագիրը բուականօրէն չը ցուցնէր թէ
ինչ ինչ վատթարութեանց մէջ ինկած են հա-
րըստահարեալք, եւ ի՞նչ են եղեր վատթարու-
թեանց պատճառք: Այդ տեղեկագիրը այսչափ
կրնար լինել, եւ աւելին յուսալու իրաւունք
չ'ունենէք. զի առանց երթալու, աչքով տես-
նելու եւ ի՛ մօտոյ զգալու անհնար էր կատար-
եալ տեղեկագիր մը չ'ինել. այդ տեղեկագիրը,
կ'ըսեմ, ըստի է, սակայն անոր պատրաստու-
թիւնն իր թերութիւններն ունի: Ես երբք ան-
գամ ճամբորդած եմ ի՛ Հայաստան, գիտեմ թէ
դեռ որչափ բաներ կան, զոր ոչ ոք հեռուէն
կրնայ գիտնալ եւ անոնց պատճառներուն տե-
ղեկանալ: Ես կ'ուզէի տեսնել այնպիսի մի տե-
ղեկագիր, որ մեր գաւառացի եղբարց ներքին
վերքերը քննէր իր պատճառներովը երեւան հա-
նէր, որպէս զի կ'առավարութիւնը՝ որ կէտեր

կայ, որոց տեղեկակ չ'է, իմանայ. քանզի ատոր
տաճկեղէն թարգմանութիւնն ալ պիտի լինի
հարկաւ:

ՏՕԳԹ. ԲԱՅԱՏԵԼԵԱՆ ԷՖ. — Ուրախ եմ որ
Ժողովոյս մէջ այնպիսի երեսփոխան մը կը գըտ-
նուի որ ամեն գաւառ շրջած եւ անոնց մէջ
տեղի ունեցած զեղծմանց եւ հարստահարու-
թեանց Յանձնաժողովէն աւելի եւս ականատես
տեղեկակ է, սակայն միայն տեսած ըլլալը չը
բաւէր, ցոյց տալու է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես Մարկոս էֆ. ի խօս-
քին վերջերը հասայ, որով կարծեմ, ըսել կ'ու-
զէր թէ Յանձնաժողովս կազմող անդամները
Հայաստան գացած եւ աչօք տեսած շօշափած
չեն այն հարստահարութիւններն, որոնց տեղե-
կագիրը կը ներկայացնեն, եւ ասի պատճառ
մէջ կը բերէ տեղեկագրին թերութեան: Սա-
կայն կը ծանուցանեմ Մարկոս էֆ. ի որ՝ Յանձ-
նաժողովոյս անդամոց մեծագոյն մասը գաւառ-
ները տեսած եւ անոնց վիճակը ճանչցած են.
Ատենապետ Գեր. Ներսէս Եպիսկոպոս արդէն
մեծ վիճակի մ'առաջնորդ է եւ ուրիշ շատ մը
տեղեր պտրտած. նմանապէս Սիմէօն Եպիսկո-
պոս գաւառները շրջած եւ անոնց վրայ լաւ
տեղեկութիւն ստացած է. իսկ Երեմիայ Եպիս-
կոպոս Հայաստանի ցաւոց կեդրոնին Մուշի,
Բաղիշի եւ այլն առաջնորդութիւնը երբեմն վա-
րած է, որով եւ աւելի հմուտ այդ մասին.
այսպէս նաեւ Ամբրոսիոս Արքայապետ եւ Աա-
զարոսեան Քրիստոստուր էֆ. ալ եւ այլ գաւառ-
աց մէջ ճանապարհորդութիւն ըրած եւ ա-
նոնց վիճակը քննած են. Մաթթէ եւ Օբգէ:
խմբագիրներն արդէն գաւառացւոց ցաւերուն
մեծաւ մասամբ տեղեկակ են: Ասոնց անձնա-
կան հմտութենէն զատ Յանձնաժողովոյն առաջ-
նորդած են Յ.Կ կտոր առաջնորդական ընդար-
ձակ տեղեկագրերը եւ Պատրիարքարանի վեր-
ջին քսան տարուան արձանագրութիւնները, ո-
րոնց ամենուն վկայութեանը վրայ հիմնուած է
տեղեկագիրը: Այլ սակայն կ'զգանք Մարկոս
էֆ. ին ակնարկութիւնը. ասկէ 3-4 տարի յա-
ռաջ Պատրիարքարանը 31 յօդուածէ բաղկա-
ցեալ տեղեկագիր մը մատուցեր է Բ. Գրան,
գաւառացւոց վիճակին վրայ. այն ասան Բ. Գր-
ան կողմէն Ալի Պէյ եւ Ազգին կողմէն ալ Ա-
զարէկեան Մարկոս էֆ. քննիչ գացեր են:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — (Ը.Պ.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.) Ես Ազ-
գին կողմէն չ'էի խրկուած:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շ.Պ.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.Ք.) Պատ-

բխարքարանի Գիւանատան մէջ թէեւ Մարկոս էֆ. ի տեղեկագիրը վնասեցինք, բայց չը գրասանք:

ԱՂԱՏԻՎԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդգծելով) Արովհետեւ Ազգին կողմէն դրկուած չէր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Շորտաւելով) Սակայն Պատրիարքարանի թէ Ազգային ժողովոց եւ թէ Բարձրագոյն արձանագրութիւնները մեզի կը հաստատեն թէ՛ Մարկոս էֆ. Ազգին կողմէն քննիչ նշանակուած էր: Արդ՝ ձայնակցելով Ռաֆայէլեան էֆ. ի մեծապէս շնորհակալ կ'ըլլանք, եթէ իւր քննչութեամբ հաւաքած տեղեկութիւնները յայտնէ այժմ. բարեբաղդաբար երեսփոխան ալ գտնուած է, որով թէ զուրկ չենք մնար անոնցմէ եւ թէ տեղեկագրին թերութիւնը լրացած կ'ըլլայ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Խօսելու կարծեմ մեծ իրաւունք ունիմ այս մասին, զի կեանքիս մեծ մասը գաւառաց եւ մեր խեղճ ժողովրդուան մէջ անցուցած եմ, ուստի գիտեմ թէ այդ տեղեկագիրը չափազանցութիւն ունի թէ պակասութիւն: Յայտնի է թէ Յանձնաժողովը միտքը դրած չէր Հայոց պատմութիւն շինել, Լաստիվերայի ըլլալ, եւ Խորենացիի պէս ալ ողբալ, այլ միայն հարստահարութեանց կէտերըն ամփոփել: Քրթաց հարստահարութիւնք ամենուս յայտնի բաներ են, եւ այնչափ ըստոյզ որ Բ. Գրան իսկ կը վկայէ. ուստի ես քնաւ չափազանցութիւն չեմ տեսներ: Օրինակի համար. տեղեկագրին մէջ նշարակուած վաշխառութիւնը ստոյգ է, զի հարիւրին քառասուն վաշխ կ'առնուի, եւ չափազանցութիւն չը կայ ասոր մէջ: Երբ հարկ ըլլայ որ ես ալ վկայութիւն մէջ բերեմ, պիտի ըսեմ որ այնպիսի տեղեր գտնուեցայ, որ ձեռնող մարդուն համար քանի մը կանգուն կտաւ չը գտնուեցաւ եւ քիչ մը խոտի մէջ պատեցին խեղճ մարդն ու թաղեցին. դուք տեսե՛ր էք տյնպիսի խեղճ կին որ իւր դուրկին պատանք չը գտնայ եւ իր պատռած հագուստէն կտոր մը պատռէ ու դուրակը պատռատէ: Ալ աւելին պատմեմ ձեզի. տեսած եմ Ս. Կարապետի վանուց մէջ էր քսանէն աւելի տղայք կը շարունակէր դրան առջեւ (ձմրան կղանակին մերկ եւ զողոզուան. Բուսիայէն եկող ուխտաւորները կը հանեն շապիկներ կուտան անոնց՝ որ հազնին Ուստի դիտել կուտամ ժողովոյն, որ ամենեւին չափազանցութիւն չը կայ տեղեկագրին մէջ եւ Յանձնաժողովը խնամով հա-

ւաքած է ինչ որ ամենակարեւոր էր: Այս մասին տարակուսելու տեղի չը կայ եւ ոչ ալ վիճարանելու, վասն զի օրինաց ծրագիր մը չէ քննութեան տանուածը՝ այլ եղելութեանց տեղեկագրութիւն մը: Մարկոս էֆ. կ'ըլլէ որ ասի տաճկերէնի ալ պիտի թարգմանուի եւ պաշտօնապէս ներկայանայ. այդ ալ Քաղ. ժողովը հարկաւ իր վրան պիտի առնէ. որպէս զի տեղեկագրին իր կատարելութեամբը մատուցուի Բ. Գրան: Կը յուսամ որ Տէրութիւնն պիտի յօժարի ըսել մեզ, զի իր շահը մերինին հետ խառնուած է. խնդրոյն այս վիճակին մէջ ներքի չ'է մեզ դանդաղիլ, փութալու է որ թէ քննութեան եւ թէ թարգմանութեան համար 30 օրը չ'անցած՝ տեղեկագրին երթայ ուր որ անկ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւունք ունիք, Սերբազան Հայր. մանր մունր բաներով ժամանակ անցնելու չենք. Ընդհ. ժողովը իր մէջէն Յանձնաժողով մը կազմեր եւ այս դործը անոր է յանձնել. Յանձնաժողովը տարի մ'ամբողջ աշխատելէն վերջը բերաւ իր աշխատութեան արդիւնքը ժողովոյն, ուստի ժողովը այդ տեղեկագրոյն գլխաւոր կէտերուն վրայ խօսելով ընդունելու է զայն ինչպէս որ օրէն է ամեն ժողովոց համար:

ԱՂԱՏԻՎԵԱՆ Մ. ԷՖ. — Կը ցաւիմ որ Փափագեան էֆ. սխալ հասկցաւ ըսածս: Ես չեմ ըսեր որ տեղեկագիրը թերութիւն ունի, եւ ընդհակառակը կ'ըսեմ, շատ լաւ կերպով ամփոփած է եղելութիւնքը, եւ մինչեւ ցարդ իւր սարքն ու կարգաւն այնպիսի կանոնաւոր մի տեղեկագիր չ'էր երևցած, սակայն որպէս զի այդ տեղեկագիրը ուր որ պիտի սանք, իրաւունք ունենանք ասելու թէ՛ այս այսպէս է, պէտք է կարողանալ ասել թէ՛ մենք այս ինչ անձերը զրկեցինք եւ ատենց տեղեկագրին է այս. այս ասանկ է, ուղիւ է պէտք է կարենանք ասել, որ Կառավարութիւնն ալ վերահասու լինի այդ եղելութեանց եւ դարմանը հոգայ. զի նա կ'ողբէ իր ժողովրդեան ունեցած ցաւերն, վշտերն իմանալ եւ անոնց դարմանները տանել, բայց մենք իբր հպատակ Ազգ. Տէրութեան մէջ գործուած զեղծումներուն չ'ենք կրնար դարման ցուցնել:

Տ. ԱԵՆՈՆԻ ՎՐԻ. — Կը գիտեմ որ քանի մը գաւառաց առաջնորդներ՝ զանցութիւն ըրած են իրենց գաւառաց մէջ եղած ոճրագործութիւնները Յանձնաժողովոյն խմայնելու: Վանայ յարակից Աղթամարու վիճակի մէջ կրնամ ըսել թէ, ամե-

նէն եւեւ զեղծուածք կը կատարուին եւ տեղեկագրին մէջ չ'են նշանակուած, ինչպէս նաեւ Խիզանու մէջ. կը խնդրեմ որ ասոնք ալ անցնին տեղեկագրոյն մէջ:

ՊԵՆԱՆ ԷՖ. — Կը ցաւիմ որ այս ամենապարզ խնդիրը կը ճակատի եւ անվերջանալի գիտողութեանց կենթարկի:

Հարստահարութեանց խնդիրը արդարեւ ծանր ու դժուարին էր բայց այսօր դիւրացած է ներկայ քաղաքականութեան շնորհիւ. ընդունայն գիտողութիւններ կ'ըլլան հարստահարութեանց քննութեան եղանակին վրայօք. տարակոյններ կը յարուցանեն անոնց վրայ, սաշայն ստոյգ իրողութիւններ են անոնք, որք եւ ոչ իսկ տարակոյնի ներքեւ թողուլ հարկ է: Այժմ մեր ընկիւթը խիստ պարզ է. Կառավարութիւնը իւր ներքին ֆուստուց պատճառները կ'որոնէ. օգուտ քաղել ներկայ քաղաքականութենէն եւ ծանուցանել Բ. Գրան մեր տեղեկագրին համառօտ բովանդակութիւնը, կառավարութիւնն իսկ գո՞ տրի ըլլայ, եթէ գործադրելի առաջարկութիւններ զանէ հոն. ուստի կ'առաջարկեմ թողուլ առաջին մասը, անցնիլ երկրորդին, այն է, դարմանի խնդրոյն, եւ ուր, եթէ անդործադրելի կէտեր կան. ՚ի բայ թողուլ գործադրելիները ներկայացնել Բ. Գրան: Ա. դարմանին վրայ խօսելով, Յանձնաժողովը առաջարկած է շեղել տեղ զօրք տալ. այս դարմանը անգործադրելի կը դանեմ որովհետեւ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդգծելով) Բ. մասին վրայ պիտի խօսինք ուրեմն: Արդէն մէկ քանի ժողովականք խօսք կ'ուզեն. խօսիլ ուղղութեան նախ այս յայտարարութիւնը պիտի ընեմ. այսպիսի ծանր խնդրոյ մը մէջ ինձի պարտք կը համարեմ, աղաչեմ իմ ընկերակիցներս, որ այն բանը միայն խօսին, որմէ օգուտ մը յուսանք գործին կամ թէ լոյս մը յառաջ գայ խնդրոյն, այնպէս որ այն երեսփոխանը որ ետքը Ատենագրութեան մէջ իր խօսածները կարգացած ատենը տեսնէ որ՝ բնաւ նոր լոյս մը չ'է բերեր խնդրոյն, այսպիսի խնդրոյ մը մէջ ժողովին վայրկեաններն ընդունայն գրաւած ըլլալը իր խղճին վրայ ծանրանայ: Հիմայ եթէ Ա. մասին մէջ պակաս գտնող չիկայ, քուէի պիտի դընեմ զայն:

ԽՕՃԱՍՍԻՐԵԱՆ Օ. ԷՖ. — Տեղեկագրին առաջին մասին մէջ այնպիսի բաներ պիտի տեսնուէին, որք չ'են նշանակուած. անոնք որ յայտնի ցաւ զգացած են, այսինքն պատուոյ ըս-

տակի հարստահարութիւն կրած են, անոնք պառացի են, գաղտն մնացած բարոյական ցաւեր կան, որ տեղեկագրէն դուրս մնացած են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կա՞ն այնպիսի զէպքեր՝ որ տեղեկագրէն դուրս մնացած ըլլան:

ԽՕՃԱՍՍԻՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այո՛, բայց իմ քննչութեանս տեղեկագրին մէջ չ'էին կրնար անցնիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսել է որ տեղեկագրին մէջ անցնելու պէտքը չ'էր զգացնէր, եւ քանի որ ուրիշ գիտողութիւն ընող չը կայ, ուրեմն առաջին մասին վրայ վիճարանութիւն սպառած է, եւ երկրորդին վրայ է խնդիրը, որ եւ արդարեւ տեղեկագրոյն պիտը կարեւոր մասն է: Այս մասին, այսինքն դարմանին գալով, Մարկոս էֆ. ըսաւ թէ՛ Տէրութիւնն ալ կ'ուզէ իր հպատակ ազգաց ունեցած ցաւերը, վշտերը իմանալ, վերահասու ըլլալ, եւ անոնց դարմանները մտածել, սակայն հպատակ ազգ մը կրնայ ինքն իրմէ դարմաններ գտնել, Տէրութեան ներկայացնել, եւ «ա՛նա՛ դարմանները, այսպէս ըրէք» ըսել, միթէ մենք կարող ենք այս պահանջումն ընել Տէրութեանն: Կրաւունք ունի Մարկոս էֆ. բայց մենք մեր դարմանները իբրեւ մեր ազգային փորձառութեան արդիւնքը, իբրեւ առաջարկութիւն պիտի ներկայացնենք. Ընդհանուր ժողովը կարծեմ արդէն որոշած է այսպէս ընելը:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Ես երբ մի անգամ նախորդ Մեծ Եղեցիքու Ալի Բաշային հետ ընդհանուր տեղեկագրի մը վրայ խօսեցայ, Ալի Բաշա ըսաւ որ եթէ կարելի է այդ տեղեկագրին մէջ պարունակեալ գանդատներուն հետ դարմաններն ալ յիշեցրնեմ: Ուստի կարծեմ թէ Կառավարութիւնը շնորհակալ կ'ըլլայ մեր այս ծառայութեանն, եթէ, ինչպէս Ատենագրութեան էֆ. ըսաւ, մեր ցուցած դարմանները առաջարկութեան ձեւով ներկայանան: Իսկ ընդունելութեան գալով, կառավարութիւնը որն ուզէ կրնա՞նք եւ չ'ուզածը կը ժխտէ, կարելի է աւելի իմաստուն դարմաններ գտնելով:

Ատենագրութեան էֆ. քուէի կը դնէ Ա. մասը, զոր ժողովն ընդհանուր հաւանութեամբ ընդունուած կ'որոշէ, եւ կ'անցնի Բ. մասին, այսինքն դարմանին վիճարանութեան:

Ատենագրութեան էֆ. կառավարիչ սկիզբէն զուրխ առ զուրխ՝ մաս առ մաս վիճարանութեան ենթարկել, եւ ՚ի յուշ կ'ածէ հարստահարու-

թեանց տեղեկագրի Բ. մասին Ա. դարմանը, որ է՝ արքունի տրոց զեղծմանց դէմ, եւ ժողովը վիճարանութեան հրաւիրելով այս կէտիս վրայ, խօսքը կուտայ Պէկեան էֆ.ի, զոր ընդմիջած էր պահ մ'առաջ:

ՊԵՆՏԱՆ Թ. ԷՖ. — Հարստահարութեանց դարման պիտի պահանջենք, բայց արժան է դիտել թէ, երբ տիրող կառավարութիւնը ուզէ հարստահարութեանց դարման չտանելու քաղաքականութեան հետեւիլ, շատ դժուար կ'ըլլայ հպատակ ազգի մը համար դարման պահանջելու ձեռնարկը. բայց երբ ընդհակառակը զանոնք բառնալու կամք ունենայ, այն ատեն ալ կը զիւրանայ: Արդ՝ բարեբաղդաբար մեր բարեխնամ կառավարութիւնը այսօր ջանք կ'ընէ այդ շարեաց դարման տանելու, ըսել է թէ մեր ձեռնարկը զիւրացած է, հերիք է որ մեր առաջարկելիքներն անգործադրելի չ'ըլլան, ինչպէս Յանձնաժողովոյ առաջարկած Ա. դարմանն որ զինուորատուութիւնն է փոխանակ շէտի տրոց, եւ դայս առ այժմ անգործադրելի կը տեսնեմ, որովհետեւ Ռեւոլյուցիոն ինքն ինքն չ'առաջարկէ հպատակ ազգաց զինուորատուութիւն կը տրամադրէ, սակայն անոր հետ ուրիշ արտօնութիւններ կը շնորհէ, որք տակաւին գործադրութեան մէջ չ'են. ես կարծեմ թէ զինուորատուութեան ժամանակը եթէ հասած ըլլար, կառավարութիւնն ինքնին կը պահանջէր ու գործադրութեան կը ձեռնարկէր:

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կարծեմ որ լաւ կ'ըլլայ եթէ դարմանի խօսք բընաւ չ'ընենք. չ'ըլլայ որ դարմանը յոռագոյն ըլլայ քան զցաւը. Ռուսաստանի մէջ այսպէս եղաւ. Հայք դարման ուզեցին Եջմիածնայ վանուց բարեկարգութեան համար, Պալատէնեան տրուեցաւ, տրուած այս դարմանը աւելի վատթար գտան, բայց չի կրցին ետ դարձնել, զի օրինաց կարգն անցաւ: Մեր Ազգը կը փճանայ, կ'ըսպառի, եւ այս խնդիրը փափուկ է, պարտինք խորը մտածել եւ ապա գործի ելնել լաւ մտածեցէ՛ք, գուցէ Ազգը զինուորականութեան թշուառութեանց եւ զեղծմանց իսկ ենթարկէք:

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴ. ԵՐՄՂ. ՓՈՒՆ. — Զինուորական տրոց տեղ մարդ տալու խնդրոյն մէջ շատ մը նկատելու կէտեր կան. ըստ իս զինուոր առնողի եւ տուողի մէջ շատ մը դժուարութիւններ կ'ըլլան, զորս բառնալն անհնարին է զը-

րեթէ, եւ եթէ հարկ կարող ըլլայ, եւ բացատրել, որ հիմայ աւելորդ կը համարիմ, սակայն այս դժուարութիւնները նկատելով ես կ'ըսեմ որ առ այժմ ետ թողուի այդ առաջարկութիւնը:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Գաւառական հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովն իւր տեղեկագրիւր կը վերջացնէ սա առաջարկութեամբ որ յանձնուի նա Ազգ Վարչութեան որ կառավարութեան ներկայացնելով պարտուպատշաճ անօրինութիւնը խնդրէ: Ուստի այս առաջարկութեան համեմատ եթէ Ընդհ. ժողովը պիտի յանձնէ զանի Ազգ. Վարչութեան աղէկ կ'ըլլայ սպասել որ Քաղ. ժողովը ալ իր փորձառնութեամբը ունեցած եւ ստանալիք տեղեկութիւնները բերէ եւ գործադրելի եղանակը ներկայացնէ, որովհետեւ համակամ դարմաններու վրայ պիտի խօսինք, ուստի լաւ կ'ըլլայ Քաղ. ժողովոյ գիտողութիւններովն հանդերձ Ընդհ. ժողովը վիճարանութեան ենթարկէ զայն: Ասանկով անտեղութիւն չը պատահիր եւ Ընդհ. ժողովոյ գիտողութիւններէն ու որոշումներէն վերջը Քաղ. ժողովը անգործադրելի կամ աններկայանայի կէտ մը չ'ընշմարէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ընդհ. ժողովը ինք պիտի որոշէ ասի վերջէն, հիմայ զինուորական խնդրոյն վրայ է խօսքը, որոշեալ բանի մը վրայ անդրադառնալ չ'ըլլար, այդ առաջարկութիւնըն առաջ պէք էր ընէիք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տէրութիւնը ինքն ինքն չ'առաջարկէր իւր հպատակ ազգերը հաւասար կը ձանջնայ, եւ անոնց բարեկարգութեան նախաձեռնիք է: Սակայն Տէրութեան այս տրամադրութիւնը չ'ենթադրեր որ ինք որոնէ, գտնէ մեր ցաւերը եւ զանոնք դարմանէ, մեղի անկ է ցոյց տալ իրեն. կը հետեւընեմ ուրեմն որ զինուորական տրոց խնդրոյն համար, Ազգը մինչեւ ցարդ զինուորատուութեան հետամուտ չը դանտելով Տէրութիւնն այնպէս կարծեր է թէ մենք զինուոր տալ չ'ենք ուզեր, եւ ի հարկէ տրոց ենթարկեր է զմեզ, ուստի պէտք է իրեն ներկայացնել մեր տրամադրութիւնը այս մասին:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Այս մեծ խնդիրն, որոյ համար շատ հեռատես եւ ականաւոր ազգայինք խիստ շատ անգամ խնդիր յուզած էին լուսեայն եւ չ'էին համարձակեր հրապարակ նետել զանազան նկատմամբ, դէպքերը եւ ժամանակը զայս ի լոյս կը հանեն եւ մինչեւ պատկառելի ժո-

ղովոյս ատենանը կը ձգեն, ուրախ եմ ասոր համար, բայց միայն պիտի խնդրեմ որ ժողովը զայս մեծ խնդիրը լաւ ուշադրութեան առնէ, քանզի կ'արժէ որ կարեւորութիւն առնու զինուորատուութեան խնդիրը, ժողովը մեծ գործ մը տեսած պիտի ըլլայ ցրելով այն հինաւուրց նախապաշարու մը որ բաւական ժամանակէ հետէ մեր պապերէն սկսեալ մինչեւ ցարդ ընդհանուր Թուրքիոյ Հայոց սիրտը սարսափով պատած է, եւ որոյ անձամբ իսկ ականատես եղած եմ Հայաստանի մէջ ճամբորդութեանս միջոցին:

Արդ ժամ է որ ընդհանուր Ազգին այս սնտախի երկիւղը փարատի եւ մտնէ զինուորատուութեան սկզբունքը ժողովրդեան մէջ, որ գէթ օր մը կարելի ըլլայ այս խնդիրը վերջնապէս լուծել:

Եւ միթէ փորձերը չ'ենք տեսներ ամեն օր եւ ամեն ժամ, եթէ ընդհանուր հաշիւ մ'ըլլար, առանց զինուոր տալու սպառազէն քիւրտերու զո՞ գացող Հայոց թիւը բացարձակապէս աւելի է քան զինուոր գրուելով Ազգին տալու զոհերէն. ո՞ւր թողունք որ առաջին պարագային մէջ Հայը վատաբար կը մեռնի արիւնոռչա Գիւրտին ձեռք, իսկ զինուորութեան մէջ Հայրենեաց, Տէրութեան, պատուոյ եւ կենաց ապահովութեան համար քաջաբար պիտի մեռնի: Կը թողում ուրիշ օգտակարութիւնները, որոնք խիստ երկայն ժամանակաց պէտք ունին մանրամասն պատմելու: Արդ կ'եղբակացնեմ խօսքս վերջացնելով որ՝ պէտք է տարբեր կերպով խորհի արդի Հայը այս պարագայիս մէջ, քան իր պապերը: Եթէ ազիտութիւնը, պանդխտութիւնը, աղքատութիւնը վանել կ'ուզէք, եթէ վատ հարստահարիչներու ձեռքէն ազատել կ'ուզէք Հայերը, ալ պէտք է ուրեմն որ զինուորականութեան սկզբունքը ընդունիք, եւ ժողովրդեան մտքին մէջ արձանացեալ նախապաշարումն անհետանայ:

ԱՂԱՔԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ կ'ուզեմ քիչ մը այս առաջին դարմանին վրայ խօսիլ: Մինչեւ հիմայ ցուցուած դարմանի եղանակները խակ էին եւ տարակուսելի՝ եթէ կրնային ընդունելութիւն գտնել:

Եթէ ազգի մը նիւթականը լաւ է բարոյականըն ալ լաւ կը լինի, ասոնք երկուքն ալ միօրինակ կ'ընթանան ազգի մը յառաջադիմութեանը համար: Այս սկզբան քաջ վերահասու ըլլալու եմք, եւ ես նորա ջերմ պաշտպանողներէն պիտի ըլլամ ամեն անգամ որ ընդդի-

մախօսներ ունենամ. պիտի ջանամ միշտ հաստատել թէ՛ այս սկզբան չգոյութեամբն է որ մեր Ազգը այս վիճակին մէջն է ինկած: Մեր Ազգը աղքատ է եւ օրէ օր կ'աղքատանայ այս է մեղի համար ստիպողականութիւնը կառավարութիւնն իրեւ տիրող եւ մենք իրերեւ հպատակ, անշուշտ մեղմէ ծառայութիւն մը կը պահանջէ, մենք կ'ըսենք իրեն «կը ձանջնանք մեր պարտականութիւնը, սակայն անձնապէս ծառայելու կարող եմք եւ նիւթապէս ո՛չ»: «Կոտորէ՛ք իկայ են ըսածներուս, այն դիպուած տուրքերը յայտնի կը ցուցնեն թէ տուրք տալու կարող չ'ենք: Արդ զինուոր տալ կ'ուզենք, վասն զի պէտք է չ'ենք կրնար տալ, վասն զի ստակ չ'ունինք»:

Գաւառացւոց համար այս տրոց խնդիրը ծանր է: Մենք գաւառականքս երկու տեսակ տուրք կուտանք, մէկ մը մեղի, մէկ մ'ալ անկարողաց համար, որոնց տուրքը մեր վրայ կը բաժնեն: Օրինակի համար, մենք Եղմիրի մէջ երեք եղբայր ենք, եւ թեպէտ շատ տարիներէ ի վեր հեռացեր ենք անկէ, մեր պէտքերը կուտանք միշտ. սակէց զատ կը հաշուեն բոլոր Եղմիրի անկարող աղքատ Հայոց պէտքերը, եւ այն դուժարն ալ կարողացս վրայ կը բաժնեն եւ մեզնէ կ'առնուն անոնց ալ պէտքերը: Զաւակ չ'ունեցող հարուստ մարդը՝ անկարողին որդւոցը համար պէտքերը կուտայ. ուսկից հետեւաբար չ'քաւորութիւն կը ծագի. վերջապէս քանի ներս երթանք, մասաւանդ կիլիկիոյ կողմերը, աղքատութիւնն այնքան կ'աւելնայ, զի կարողները կը պակսին միւսներուն թերին լեցնելու համար: Պօլսոյ համար ալ 45 տարիէ ի վեր է պէտքերը պահանջէ Տէրութիւնը եւ ամեն տարի Մեզնէ հաշուեցոյց մը կը գրկէ Պատրիարքարան, որոց դուժարը 35-40 հազար լիւրայի կը հասնի, զիտէ՛ք արդեօք թէ ի՞նչ կը պատասխանէ Պատրիարքարանը, «Մայրաքաղաքիս տաճիկները զինուոր չ'են տար, ուստի մենք ալ զինուորի փոխարէն ըստակ տալու պարտք չ'ունինք կ'ըսէ: Բայց այս խնդիրը չ'է լուծուած եւ օր օրի վրայ դուժարը կը բազմանայ կ'ըստուարանայ: Սակայն ամենէն աւելի նկատողութեան առնելու կէտը այս է որ եթէ մեր այս առաջարկութիւնն ընդունի Տէրութիւնը, արդեօք մեր գաւառացիք համամիտ պիտի ըլլան: Զեմ ըսեր որ առ հասարակ ամեն գաւառներ պիտի ժխտեն այս առաջարկութիւնը, բայց չըկայ այնպիսի

գաւառներ որ ըսեն «Տուրք կուտանք, զինուոր չենք կրնար տալ» : Տաքուկ սենեկին մէջ նըստած , ընտանիքը շուրջը բոլորած դիւրին է խօսել, սակայն երբ գան ու իր սիրելի գաւազը գրկէն յափշտակեն , միթէ պիտի թողու անտարբերութեամբ որ խնն տանին : Այս առարկութեամբ ըսել չեմ ուզեր որ թողունք այս առաջարկութիւնը , սակայն լաւ ուսանելու ենք , ինչպէս ըսաւ Մարկոս էֆ. եւ ապա առաջարկելու . պէտք է այժմէն պատրաստուինք այս առաջարկութեան , որպէս զի գաւազիք այ այսպիսի նոր դրութիւն մը միահաղոյն ընդունելու պատրաստուին :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Զինուոր տալու առաջարկութեան ես ալ կրճայնակցիմ եւ կը յուսամ ընդունելութեան յաջողութիւնը, նկատելով որ՝ արդէն տաճիկ ազգը կը գանգատի այդ մասին իր ժողովրդեան նուազմանը համար . ուստի յարմար առթիւ պիտի ներկայանայ մեր այս առաջարկութիւնը :

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ. — Սահմանադրութիւն մ'ունինք , ուր Ազգին իրաւասութիւնը զըծուած են . այդպիսի խնդիր մը յուզելու իշխանութիւն մը , հեղինակութիւն մը տրամադրած է մեր Սահմանադրութիւնը , եթէ ոչ , մեղանշած չենք ըլլար :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. ԷՖ. — Քանի քանի անգամ Քաղ. ժողովոյ անդամ ընտրուած եմ, զիտեմ որ գաւառներէն շատ անգամ արոց ծանրութեան համար գանդատներ տեղացած են ինքզինական Արշուկեան : Սակայն բնաւ այդ գանդատներու մէջ ստակի տեղ զօրք տալու փափաք ցոյց չէ արուած . ուստի արդէն նախատեսութիւն ընելու ենք այս մասին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Յանձնաժողովն իր Գ. նստին , այն է 1870 դեկտեմբեր 28ի նստին մէջ զինուորութեան խնդիրն ուշադրութեան առած է , եւ ամբողջ նստի մը մէջ երկարօրէն վիճարանելէ ետեւ ընդունած է . անկէ ետքն ալ տասն ամսոյ միջոցի մէջ միեւնոյն խնդրոյն վրայ անդրադարձած եւ կրկին կրկին զայն ընդունել պատշաճ դատած է , Բայց ամենէն աւելի աչքին զարկած կէտը սա եղած է թէ՛ քաղաքացիութեան իրաւունքները կատարելով վաշելելու համար՝ ընական հետեւութեամբ պարտաւորութիւն կայ այդ առաջարկութիւնն ընելու , որ թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս իր օգուտներն ունի :

Բարոյապէս Հայ ժողովուրդը պիտի զօրացը-

նէ , եւ զգացնէ իրեն թէ ինք ալ երկրին աւերըն է , որուն մէջ իր ընտանիքն ու ստացուածքն ունի , եւ թէ զանոնք պահպանելու համար ինք ալ համահասար պարտաւոր է իր Օսմանցի հայրենակցին հետ ընդհանուր պահպանութեան ծառայութիւնը մատուցանել երկրին : Այժմ որ Մահմետական ժողովրդեան հետ իբրեւ ծառայ ընդ տեասն կը վարուի , ան աւեն պիտի փոխուի , եւ այս փոփոխութեան հետեւութեամբ իր դրացի Մահմետականն ալ իր տիրական գաղափարը պիտի փոխէ եւ հաւասար իրաւանց տէր հայրենակցութեան գաղափարը պիտի ընդունի : Այժմ հայ գիւղացի մի որ անօրէն քիւրտի մը ստջիւ անգոր իր ինչքն ու պատիւը պաշտպանելու , տեղի եւ քաջալեր կուտայ անոր զինքը կեղեքելու , հարբտահարելու , այն խեղճ մարդը՝ որ այժմ իր կնոջ առեւանգութեանը կամ զաւկին յափշտակութեան առջեւ մորմոքած՝ թեւերը ծալած կը կենաց սոսկումէն կամ աղետարշ սրտով կը խոնարհի յաղերս , որպէս զի ի գութ շարժէ բռնաւորին սիրար եւ անմեղ զոհերը թափէ անոր ձեռքէն , ան ատեն այդպիսի ախուր եւ սրտածմլիկ պարագայի մէջ չը պիտի թուրնայ , զի ստրկութեան գաղափարն այլ եւս զինքը չը պաշարէր , այլ ողի պիտի աւնու եւ ինքզինքը պաշտպանելու փորձն ընել պիտի ճգնի , կատաղի մոլեղնութեամբ սրտասլինդ քան ըզքիւրտն պիտի կուրի անոր հետ եւ քաջութեամբ իր պատիւն ու կինը կամ զաւակը պիտի ազատէ անօրինին ձեռքէն . եւ զանի վանէ իւր այս վարմունքը նմանօրինակ չդէպքերու արդելը պիտի գնէ , քիւրտն իր որջին մէջ պիտի փակէ , երկիրն հարստահարութենէ միրկէ , մէկ խօսքով իր ինչքն ու պատիւը՝ կինն ու զաւակը իր ձեռք պիտի կարենայ պաշտպանել . ինքն ինքզինքը պիտի փրկէ եւ ուրիշէն չը պիտի սպասէ :

Նիւթական օգուտներ ալ ունի զինուորութիւնը . զէնքը ներկայ ժամանակիս մէջ պատուոյ , ընչից եւ կենաց պահպանութեան հարկաւոր պիտոյք մ'է : Ասկէ գատ եթէ քըննենք թէ որչափ պանդուխտ ունինք այժմ, ասոնց պատճառաւ որչափ երկիր անմշակ մնացած է , որչափ զաւակ տարուէ տարի կը կորսնցնենք , որչափ պանդուխտ օտարութեան մէջ կը կորսուին , եւն. եւն. այն ատեն լաւ կը հասկընանք թէ՛ գաւառացիք փոխանակ կեանքն ամբողջ հողագործութեամբ անցնելու , եթէ չա-

նոր մէկ մասը վաւօղ գործածելու կամ սուր շողացնելու նուիրեն , իրենց քրտանց արդիւնքը պահպանելու նիւթական շահու առաւելութիւն մ'երեւան պիտի գայ : Աւերջապէս այս եւ ասոնց նըման այլ եւ այլ խօսրդածութեանց հետեւանքն եղած է , որ Յանձնաժողովը զինուոր տալու առաջարկութիւնը կը ներկայացնէ , ասով սա օգուտն ալ կ'ունենանք որ՝ եթէ Տէրութիւնը չը հաճի զօրք առնել , գէթ պէտէլ ալ չը կրնար պահանջել :

ՍՏՈՒՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Այս խնդիրն այնպիսի ծանր խնդիր մ'է որ չեմ գիտեր թէ Յանձնաժողովն ինչպէս կրցած է մէջ բերել իւր տեղեկագրին մէջ :

Եթէ մեր գաւառացի անչափահաս տղոցմէ յանիրաւի սուրք կ'աւնու Տէրութիւնը , կըրնանք բողոք բաճնալով ատոր առաջին ասնուր եթէ զինուոր տալով կարծենք որ այդ սուրքը մեր վրայէն կը բարձուի , շարաշար կը սխալինք , վասն զի Տէրութեան պէտէն մէջ իւր տեղն ունի այդ սուրքը , եւ եթէ ոչ այս պատճառաւ գէթ ուրիշ պատճառներով կրնայ զմեզ նոյն արոց ենթարկել . ուստի ըստ իս այդպիսի առաջարկութիւն մը՝ սուրքը մեր վըրայէն չը թեթեւացունելէն զատ՝ զինուոր տալու դրութիւնն ալ պիտի մտցնէ մեր մէջ , որ ըստ իս Ազգիս նպատաւոր չերեւիր : Զինուոր տալը մեծ զոհողութիւն է . մեզի համար պէտք է աշխատութեան վարժեցնել մեր գաւառացի եղբարքը , հողագործութիւնը տարածել նոցա մէջ , որպէս զի նիւթական կարողութիւննիս բարւոքի եւ կարողանանք մեզմէ պահանջուած սուրքը վճարել : Աւստի ես կ'առաջարկեմ որ միայն անչափահասից վրայ դրուած սուրքի գէմ բողոքենք :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — (Ժողովուրդի Կարգաւորեալ) Տեղեկագրին մէջ առաջին կարգաւորեալ այս խնդիրը՝ ոչ եթէ միայն կարգաւ այլ բարոյապէս նաեւ առաջին է եւ մայրն է ուրիշ ամեն գարծաններուն : Քննենք թէ ինչ է պէտէլ ասոնքն է , Հայը , ինչպէս ուրիշ ոչ-մահմետական ազգեր , Հայրենեաց համար արիւն թափելու իբրեւ թէ անկարող , անկարող զէնք գործածելու , բոլոր երկրին պաշտպանութիւնը միւնակ մէկ ազգ մը վրան առած է , եւ այս պաշտպանութեան փոխարէն միւս ազգերը հարկ մը կը վըճարեն . եւ այս իրաւունք է . եթէ մենք մեր հողը չենք պաշտպաներ , ո՛վ որ կը պաշտպանէ ,

առ այն պարտք մը ունինք աւելի . կարող ազգը՝ տիրող ազգը կ'ըլլայ եւ մենք հարկատու մեր իրաւունքը մեր վճարած հարկին մէջն է , Քանի որ այս վիճակին մէջ կ'ուզենք մնալ , ինչ է մեր գանգատը . պաշտպանութեան իրաւունքը շատ մը իրաւունքներ կ'ենթադրէ եւ այդպիսի գրութեան մը մէջ հաւասարութիւնն անկարելի է : Այդ գրութենէն ազատելով ու երբ քաղաքացիի մը բոլոր զգացումներն արթննան ի մեզ , երբ զինուորին յատուկ եղած պատուոյ գերագոյն զգացումը զարգանայ մեր մէջ ալ , այն ատեն Հայը պիտի գանէ իր նախնի նկարագրերը , զոր պիտի վերականգնէ զլորման ու ապականութեան վիճակէն . ուր ընկած է : Գարեբով գերութեան վիճակի հետեւանք : Յանձնաժողովը երկու բառով բացատրէ է ինչ որ կարելի է ըսել այս մասին . եթէ պատուոյ եւ քաղաքացիութեան զգացում ունինք , ըսեր է , յայտնենք աշխարհի թէ՛ մենք ալ մարդ ենք եւ արիւթեան ընդունակ : Ո՞րք կ'առարկենք թէ Տէրութիւնը չը պիտի գործադրէ մեր առաջարկութիւնը . ենթադրելով որ Տէրութիւնը չը կրնայ առ այժմ գործադրել , գարձեալ մենք շահաւոր կ'ենենք , զի յայժմամ եւ ոչ իսկ պէտէլ պիտի ուղէ Տէրութիւնը , ինչպէս զիտել առաւ իրաւամբ ֆափաղեան էֆ. Զինուոր տալու խնդրոյն մէջ գէմ բերուած բոլոր առարկութիւնները պայմաններու խնդրոյն կը վերաբերին ու հոն իրենց տեղը կը գտնեն , եւ մենք Տէրութեան մատուցանելիք մեր առաջարկութեանը մէջ՝ պիտի յայտնենք իմրայն մեր զինուոր տալու սկզբունքն ընդունելու եւ այս մասին բանակցութեան մանկու պատրաստ ըլլալին . այս բանակցութեամբ պիտի որոշուին պայմանները , եթէ պայմանները մեզի համար անընդունելի ըլլան , ոչ ոք պիտի մեղադրէ մեզ , եւ Տէրութիւնը , որ ամենէն աւելի նախաձեռնող է մեր կրօնական եւ ազգային իրաւանց պահպանութեանը , ոչ երբէք պիտի բռնադատէ մեզ . բայց եւ աշխարհի առջեւ մեր պարտուց ճանաչման ապացոյցը սուսած պիտի ըլլանք , որով եւ բարձր ի գլուխ երեւնալու իրաւունք պիտի ունենանք . այն ամեն խնդրոց մէջ , որ մեր ազգին նիւթական եւ բարոյական վիճակին կը պատկանին :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ասի ծանր խնդիր մ'է եւ ես ինչպէս որ ըսի արդէն , խիստ փափուկ զինուորատուութիւնը դարման միկարծէք հարստահարութեանց , գուցէ այդ դարմանն ա-

եկի վատթար լինի մեր ժողովրդեան համար : Ամեն Տէրութեանց մէջ տարերքներ ժողովրդեան կարգեր կան , որ զիրենք կը կազմեն , ինչպէս են՝ Արեւելքի , Պարսկաստանի , եւն . որ Եւրոպոյ ազգերը կը կազմեն , Գաղղիա , Գերմանիա , եւն : Տաճկաստանի մէջ այս տարերքը կազմողն Հայն է : Հայերն են որ կը կազմեն զիւզականը , շինականը եւն . մէկ խօսքով Տաճկաստանի հասարակութիւնը կազմողն Հայն է : Տաճիկն ալ կը բաժնուի իր մէջ շատ մը ցեղերու , որք են Ալաւի , Չիչեկ , Քիւրդ , եւն . այլ ասոնք հասարակութեան կարգ չ'են մտնար : Ալիքերի աշխարհագիրը լաւ կը նկարագրէ ասոնք , եւ եթէ վիճարանութեան ներքեւ ձգուած տեղեկագիրն շինողները երթային անձամբ ճամբորդէին ի Հայաստան , ո՛ր շուկայ , ո՛ր վաճառատուն որ մտնէին՝ պիտի տեսնէին որ բոլոր խանութներուն մէջ Հայեր են նստած , առեւտուր ընողն Հայն է , արհեստաւորն ալ Հայն է . ուստի եւ Հայը բռնած է ժողովրդեան առաջին տեղը , այսինքն հասարակութիւնը . եւ Տաճիկն ամենեւին չը մտնէր այս հասարակութիւնն կազմող տարերց մէջ : Տաճիկը չունի ընկերականութեան վիճակ եւ իւր երկիր թողած է անմշակ եւ ամայի : Երբ գիւղ մը մըտնէք , աղբրի եւ կոչնակի ձայն առնուք , ուր մարգագետին , ծառեր եւ պարտէզներ ձեր աչքին առջեւ տարածուին , ուր աղջկունք աղբիւրներէ ջուր բերեն , մէկ խօսքով երբ ընկերականութիւն նշմարէք արդ գիւղի մէջ , զիտցէ՛ք որ հայուն է այդ գիւղ , ընդհակառակն երբ գիւղ մը մտնէք ուր ոչ պարտէզ կայ , ոչ ծառ , լուռ , ամայի եւ չոր , զիտցէ՛ք որ Տաճիկն է այդ գիւղը : Աերջապէս Տաճիկի վիճակ աւելի գէշ է եւ վատթար , Տաճիկն չաւելի աղքատ է քան զՀայ եւ երբ ապրուստի կողմանէ նեղուի , զայ , մտնէ Հայու գիւղ եւ հարստահարէ զանի , կառավարութիւն չէ՛ կարող զսպել ասոնք , զի այնպիսի գաւառներ կան , ինչպէս են Վան , Մուշ , Մոկաց գաւառ , եւն . որ ձմեռ ժամանակ շարունակ վեց ամիս հեռու են կառավարութեան ձեռքնհասութենէ , ուր կառավարութիւն ոչ զօրք կրնայ ղրկել ոչ ալ բանակ : Ահա կարեւոր մաս մը որ տեղեկագրին մէջէն կը պակսի :

Ըսածներէս կը հետեւցնեմ որ զօրք տալ մեր գործին չի գար , զի Հայն իր ընկերական վիճակն հեռացուցած կըլլանք . տուրք տանք ,

տուրք տանք բայց պայմաններ դնենք , եւ ես կարող եմ այդ պայմաններ ցոյց տալ :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Պատուոյ զգացմանց նրկատուներով , զոր ակնարկեցին ոմանք Երեսփոխանաց , կարելի է ընդունել զինուորատուութիւնը , սակայն կէտեր կան նկատելու : Քիչ առաջ զինուորութիւնը մերժած ատենս , սնդործադրելու թեան առարկութիւն ըրի . կուզեմ այդ կէտն աւելի պարզել . զինուորատուութիւնն անգործադրելի կը դատեմ կրկին նրկատուներով . անգործադրելի Տէրութեան առջեւ , անգործադրելի Ազգին առջեւ : Անգործադրելի Տէրութեան առջեւ , որովհետեւ եթէ Տէրութիւնն միտում ունեցած ըլլար զինուորատուութեան , եթէ Խմբիկ Հիւսիսային տրամադրութիւնը գործադրելու ժամանակը հասած համարէր , հարկաւ ինքնայորդոր ՚ի գործ կը դնէր . թէ եւ այդ կէտն իրեն յարակից զրուարութիւններն ալ ունի , զոր առ այժմ հարկ չէ մէջ բերել : Անգործադրելի Ազգին առջեւ որովհետեւ Ընդհ. Ժողովն այս խնդրին ինքնին չէ կարող լուծել : Մեր տալիքը քուէ մ'է , ձեռու ընկա վեր վերցնել է , բայց գաւառացոց տալիքը իրենց որդիքն են . իրաւ է թէ Ընդհ. Ժողովը զԱզգը կը ներկայացնէ անոր լիազօր երեսփոխանն է եւ յանուն Ազգին կը գործէ , բայց Ազգին ու ժողովրդեան կամացն ալ թարգմանն է . ուստի Երեսփոխանական Ժողովոյ որոշումները պէտք է որ ժողովրդեան կամացը համաձայն ըլլան , մանաւանդ այսպիսի ծանր խնդրոյ մը մէջ . եթէ մեծ ըսելու արժանի խնդիր մը կայ այն ալ այս խնդրին է : Գուք որ կ'ըսէք « զինուոր տանք փոխանակ զրամ տալու » , հապա ժողովուրդը ելնէ ըսէ « ես զաւակներս չեմ տար այլ զրամ կուտամ , արտս կը ծախեմ , ոչխարս կը ծախեմ ու վաղուց անտի որոշեալ տուրքը կուտամ . » զիտէ՛ք թէ այն ատեն որչափ ծանր կըլլայ հետեւանքը . Ընդհ. Ժողովոյ որոշումը կոչնչանայ եւ այն ատեն Ընդհ. Ժողովոյ վիճակն ինչ կ'ըլլայ : Արդ եթէ զինուորատուութիւնը կարեւոր ալ դատէ պատկառելի Ժողովը . գոնէ պէտք է նախ Գաւառական Ժողովոց գրելով ժողովրդեան կամքն ու հաւանութիւնը ստանալէ ետեւ այս ծանրակշիռ խնդրոյն ձեռնարկէ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԱՋԱՆ. — Ինչպէս վկայեցին , կնճառտ եւ ծանրակշիռ խնդիր մ'է այս եւ իմաստուն նկատողութեանց արժանի : Կը տեսնեմ որ վիճարանողք երկուքի բաժնուած են եւ

երկու կողմէ ալ զօրաւոր եւ իրաւացի փաստեր մէջ կը բերեն , այնպէս որ եթէ տարի մ'ալ շարունակուի վիճարանութիւնը , երկու կողմէ ալ համազօր փաստեր պիտի կրնան մէջ բերել : Կը մնայ հիմա որոշել թէ այս երկուստեք մէջ բերուած առաջակութիւններէն ոյք են գործադրելի : Բան կայ որ այսօր կրնայ գործադրուիլ այլ վաղը ոչ :

Ես ալ կզգամ թէ այս խնդիրն արդարեւ իր ժամանակին չը ներկայանար : Մենք այս ատենին մէջ կզգանք սոյն խնդրոյն արժէքը՝ էութիւնը եւ կը տեսնենք որ հարստահարութիւնը անհաւասարութենէն յառաջ եկած են մանաւանդ . վասն զի երբ Քուրդն ու Յաճիկ տեսնեն թէ քրիստոնեայն ալ մէջքը տուր կտխեր եւ իրենց նման զինուոր եղեր է , բոլորովին պիտի փոխուին զանի իրենց հաւատար տեսնելով : Սակայն տեսնենք թէ միթէ մեր ժողովուրդը պատրաստուած է զինուորականութեան . ահա նկատելի կէտը : Այն հաւասարութիւնն , որոշանարինս կը փափաքինք , դեռ մեր ժողովուրդն դեռ մեր առաջնորդները չեն զգար տար կարեւորութիւնը եւ արժէքը : Ըստ իս սկզբնաւորութիւն ընելու է այժմէն միշտ խօսելով այս խնդրոյն վրայ եւ պատրաստել ժողովուրդը այս զրութեան : Երազիքք պիտի նըպաստեն այս մասին հայրենասիրութեան եւ քաղաքացիութեան պարտաւորութիւնները ճանչցնել տալով ժողովրդեան , զի մեր ժողովուրդը երբ լսէ թէ հրաման է եկեր զինուորագրութեան մինջեւ սահմանազուխները կը փախչի : Այս խնդրոյն վրայ երբ Տէրութիւնը գրէ կուսակալաց , անսնք պիտի պատասխանեն թէ Հայերը զինուորութիւն ընել չեն ուզեր . որ յայնժամ հակասութիւն ըսել է մեր առաջարկութեան : Ուստի ըսածներս ամփոփելով ես կ'առաջարկեմ որ սկզբնաւորութիւն մը ըլլայ ժողովուրդը այս զրութեան պատրաստելու համար :

ԱՊՐՕ Ս. ԷՅ. — Երբ Տէրութիւնը զինուորատուութիւն առաջարկեց երբեմն , բոլոր Ազգապետները կանչեց այս խնդրոյն վրայ իրենց կարծիքն . իմանալու համար . Ազգապետները , որոց մէջ էր նաեւ մեր Պատրիարքն , ալ պատասխանեցին թէ մեր ազգերը չեն կրնար զօրք տալ , ուսկից յառաջ եկաւ Պետերիկի տուրքը . այդ ժամանակէ ՚ի վեր տասնուհինգ տարի եղաւ , մի թէ Հայը պատրաստուեցա՞ւ մինչեւ այսօր զօրք տալու համար :

Յայտնի է թէ մարդն ու զրամը մի եւ նոյն կշռոյն մէջն են , եւ տարակոյս չը կայ որ եթէ շէշէլ տանք , մարդ ալ կրնանք տալ , սակայն եթէ այսօր տուրքի համար կը դանդաւորեք եւ ստակի տեղ զօրք տալ կուզենք , բրնական է որ զօրք տալով մարդ պիտի քիչնայ եւ անոնց վաստակը , որ ստակ է , պիտի պակսի : Ես ալ պիտի ձայնակցելի զինուորականութիւն ուղող պաշտօնակցացս , զի զինուորական վիճակը անձնական զգացումները կը զօրացնէ , բայց այս խնդրոյն դէմ շատ մը արդեւիքներ երեւան կելլեն :

Ուստի , Նախագահ Սրբազանին առաջարկութեան հետ , ես ալ կ'ըսեմ որ այս զրութիւնն իբր սկզբունք ընդունինք մեր մէջ , եւ սպասենք մինչեւ այն օր , յորում ուրիշ ազգեր եթէ խնդիր յարուցանեն՝ անոնց միանանք եւ այս առաջարկութիւնն ընենք Տէրութեան . ապի ծանր խնդիր մ'է , որ մեզի չը վայելք առաջարկել , զի գերդաստանի դաւախները զօրանոցները փոխադրելու խնդիր մ'է , զոր այս Ժողովոյս մէջ ձեռք մը վեր վերցնելով որոշել կուզենք :

ՂԱԶԱՐՈՒՄԵԱՆ Ք. ԷՅ. — Ասկէց չորս տարի առաջ երբ ես ՚ի Սեբաստիա կը գտնուէի , ժողովուրդը զինուորական տուրքը զեղջիլ տալու համար քանի մ'անգամ բողբոջելէն ետքը . հեւսագրով իմացուց Տէրութեան որ « ամենեւին ղէշէլ չենք կրնար տալ այլ զօրք » . սակայն Կառավարութիւնն չընդունեց իրենց այս առաջարկութիւնը , այլ հարիւրին 25 տուրքէն զեղջ ըրաւ . ձանչցայ հոն Երեսփոխան Յարութիւն անունով անձ մը որ թէպէտ հարուստ էր այլ իրենց Գաւառական Ժողովոյ մէջ աւելի զաւակը տալ կուզէր քան թէ տուրք : Ուրեմն ինչո՞ւ կը վարանիք քանի որ գաւառացիներէն ալ շատեր զինուոր տալու տրամազիր են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Աղաբէկեան Մարկոս էֆ. տեղեկագրին մէջ թերութիւններ կը զըտնէ :

(Աղաբէկեան էֆ. կ'ընդմիջէ . աղմուկ եւ ապա ընդ հուպ հանդարտութիւնը կը տիրէ) :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — (Շորտիկեւլ) Ես պիտի ապացուցանեմ որ Աղաբէկեան Մարկոս էֆ. հակասութեան մէջ ինկած է : Պահ մ'առաջ կը պնդէր թէ ամենեւին պատրաստուած չէ տեղեկագրին վրայ , այժմ ինչպէս վճռաբար կըրնայ ըսել թէ այդ տեղեկագիրը թերի է : Այսչափ ըսել ու անցնելով , տեղեկագիրը թերի չըլլէ :

կրնար ըլլալ . այլ պէտք է ցուցնել թէ՛ ո՛ր մասնոր թերի են , եւ ի՞նչ բան կը պակաս անոր մէջ , Գործուած անկարգութիւնները այն երկիրներուն մէջ կը պատճառեն , կ'ըսէ , որոնց հետ Առաւելարութիւնն անգամ ձմրան վնց ամսոյն մէջ յարաբերութիւնը ընդհատած է . եւ կը յաւելու թէ՛ տեղեկագիրը այս մասը ուշադրութեան չէ առած : Կը սխալի , վասն զի տեղեկագիրը յայտնապէս կ'ըսէ թէ՛ յարաբերութեանց մասին գծու արութիւն ունեցող գաւառներուն մէջ սովորաբար հարստահարութիւնք կը գործուին . ըսել է որ տեղեկագիրը այդ մասն ալ իր մէջ կը պարունակէ : Գարձեալ Մարկոս էֆ. կ'ըսէ թէ՛ գաւառացի Հայոց վիճակը աւելի երջանիկ է քան Մասնատականաց վիճակը : Ասիկայ ապացուցանելու ինք պարտաւոր է . մինչդեռ մինչեւ ցարդ մեր ամենուս գիտցածը այդ ըսածին ընդ հակառակն է . վկայ են այսքան տարուան հրատարակութիւնները , որոնք գաւառացի ազգայնոց աղէտալի վիճակին նկարագրիրներովը լի են . անոր ընդհակառակը կը հաստատեն մեզ վերջին անգամ գաւառներէն զրկուած Յ/Ա կտոր առաջնորդական ընդարձակ տեղեկագրերը եւ Պատրիարքարանի 20 տարուան Բ-հրատարակութիւնը . (Թէ՛ տեղեկագրերը է- Թէ՛ Բ-հրատարակութիւնը) Ազգորին ձայնը եւ գառնուկներուն մայրները մի թէ՛ բաւական են հաստատելու թէ՛ Հայոց վիճակը աւելի լաւ է քան մասնատականաց . այո՛ւ եւ ալ կը հաստատեմ թէ՛ Հայ գիւղորէից մէջ ազգոր ալ կայ , դատունկներ ալ , եղիներ ալ . ի հարկէ առանց ատոնց ի՞նչպէս կրնային ապրիլ այդ գիւղացիք . բայց ցաւալին սա է որ իրենց ապրուստին եւ վայելմանը համար քրտամբ եւ տառապանօք պատարաստուած այդ հարստութիւնները պարտաւոր են Հայ գիւղացիք բամբակու նաեւ մասնատականաց հետ , որոնց մէջ աշխատութիւնը՝ իրենց գրից շնորհիւր՝ տիրողութեան գաղափարով սյգքան յարգի չէ , եւ գիտեն թէ՛ միշտ ո՛ր հայաբնակ գիւղը մասնն , կարող են անկէ տանալ ուշաձնուն չափ ազգոր , հաւ , գառն , եգն , իւղ , պանիր , եւն : Այս է Հայոց աղէկ վիճակ մ'ունենալուն տարբերութիւնը : Հարկ չէ որ այս մասին այժմ քննութիւն ընենք . ան որ կաշխատի ի հարկէ առաւելութիւններ ունի . բայց երբ աշխատողն իր աշխատութեան արդիւնքը լիովին վայելելու եւ պահպանելու անկարող է , ի՞նչ կըլլայ հետեւութիւնը . ու

մենք ի՞նչպէս նիւթական եւ բարոյական յառաջադիմութիւն կրնանք յուսալ , երբ բոլոր ունեցածնիս ապահովութեան մէջ չեն , մինչդեռ ամեն բանէ յառաջ ապահովութիւն պէտք է , որ մայրն է ամենայն բարեաց , եւ զայն ունենալու համար որ եւ իցէ զօ՛ւ աչք առնելու ենք : Այժմ այս ապահովութիւնը կսպասենք անկէ , որուն հետ հաւասար քաղաքացի չենք . անկէ՛ որ օրօրոցէն կ'ըսկսի գինուորիլ եւ ընկերական վիճակին տիրողի գիրք մ'ունենալու կոչուիլ , մինչդեռ մենք զուրկ ենք ասոնցմէ : Գառնալով անոնց՝ որ կ'ըսեն թէ՛ արիւն չը թափուի՛ կը պատասխանեմ , միթէ՛ քի՛չ արիւն կը թափուի այժմ . եթէ կենաց , պատուոց եւ ստացուածոց պահպանութեան համար արիւն թափել պէտք չը կայ , ինչո՞ւ համար ուղորմելի անձի մը պէս քուրդին առջեւ արիւն թափէ Հայը , եւ պատերազմի դաշտին վրայ չը թափէ . քուրդը կամ ուրիշ թշնամին վանելու համար՝ ինչո՞ւ աղերսէ իր մահմետական հայրենակցին , եւ ինք չը գործէ : Եթէ հաւասարութիւնը կ'ուզենք որ իրական ըլլայ , ու մենք ալ՝ իբրեւ Հայ ազգ՝ այս երկրին մէջ մեր արժանապատուութեանը համեմատ տեղ մ'ունենանք , հաւասարութեան այս մասն ալ պէտք է որ կանխենք ուղելու : Չեմ հասկնար անոնց միտքը , որ կ'առարկեն թէ՛ երբ Առաւելարութիւնը ուզէ՛ ան ատեն զինուոր առաւ խընդրոյն վրայ կը խորհինք , երբ Առաւելարութիւնը զինուոր առնել ուղէ՛ ա՛ն ատեն պիտի ըսենք որ նախ հաւասարութեան միւս մասերը գործադրէ եւ ապա զինուոր տանք : Այսպէս բանակցութեան պիտի մտնենք կամ գաշնակցութեան , եթէ այս յուսով մնանք , ուրեմն Առաւելարութիւնը որչափ ժամանակ զինուոր ուղելու միտում չունենայ , հաւասարութիւնն ալ պիտի չիրականանայ : Թէ՛ մենք ինքնաբերաբար ելնենք առաջարկելու որ զինուոր տանք , եւ թէ՛ կառավարութիւնն ուղէ , մեր Ազգը միշտ իրաւունք ունի առաջարկութիւն մ'ընելու , որ սա է . ուր որ պիտի առաջնորդուի Հայ բանակը , հոն պիտի ունենանք նաեւ Քահանայ , Արքայապետ եւ շարժական վէճ , որ պատերազմին դաշտին մէջ վրանի տակ Ս. Պատարագ մատուցուի եւ յառաջ քան զպատերազմ , Հայ զինուորները կարգաւ մատչին խոստովանիլ եւ հաղորդուիլ եւ այնպէս մըտնեն ի պատերազմ : Այսպէս նաեւ ձմերցի մէջ Հայ Մատուորը պիտի ըլլայ , եւ իբրեւ կը-

բօնական ազգ մը կրօնական ամեն հանգամանքներն իր հետ պիտի տանի իր հինօրեայ արտօնութեանց համեմատ . եւ այս է ու պիտի ըլլայ Հայոց բանակին կնիքն ու նշանը , ու անոր իբրեւ Հայ պահպանութեանն ապահովութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրը տարածամած է , խընդիրը խիստ կարեւոր խնդիր մըն է . եւ իր ամեն պարագաներովը յուզելու համար ընական է եւ պէտք է որ ժողովին երկար երկար ժամերն զըրաւէ : Այսպիսի խնդիր մը յուզելն անգամ գործ տեսնել է : Կ'առաջարկեմ որ՝ յառաջիկայ նիստն ութն օրէն գումարի , եւ երեսփոխանք՝ սոյն միջոցին մէջ՝ զանի լաւ ուսանին , եւ իրենց հասուն խորհրդածութիւնները առաջուց պատաստած զան ժողովին :

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ կ'ընդունի Ատենապետ էֆ.ի առաջարկութիւնն եւ կ'որոշէ ութն օրէն նստի գումարիլ :

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ատենապետ էֆ. կը կարգայ ՚ի լուր ժողովոյն

Ղօնչէկիւււկան Յովհաննէս էֆ.ի հրաժարագիրն , որով ցաւօք սրտի կը հրաժարէր ժողովէն , անձնական գործոց շատութեանը պատճառաւ : Ժողովը կ'ընդունի Ղօնչէկիււկան Յովհաննէս էֆ.ի հրաժարագիրը :


Հուսկ ուրեմն Ատենապետ էֆ. ներկայութեան տուժարէն քաղելով կը ծանուցանէ ժողովոյն որ երեք անգամ ժողովէն անընդհատ բացակայ գտնուած են , հետեւեալ երեսփոխանք՝

- Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Սէթեան ,
- Պարոնեան Աւետիս էֆ.
- Մարկոսեան Գրիգոր »

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ օրինօք հրաժարեալ կը համարի այս երեք երեսփոխանքը :

Ատենը կը գոցուի ժամը 10 1/2ին :

ԱՏԵՆԱՊԵՏ Գ. Ս. ՕՏԵԱՆ ԳՈՒԱՆԱԿ ԱՏԵՆԱԴՊՐԻ ԵՂԻԱԶԱՐ Մ. ՄԵԼԻՔԵԱՆ



Handwritten text in the top left corner of the left page.

Handwritten text in the middle left section of the left page.

Handwritten text in the bottom left section of the left page.


Handwritten text in the bottom left section of the left page.

Handwritten text in the top right section of the left page.

Handwritten text in the middle right section of the left page.

Handwritten text in the bottom right section of the left page.

Handwritten text in the bottom right section of the left page.



Handwritten text on the green page.

Handwritten text on the green page.

Handwritten text on the green page.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը վաճուի
Եկեղեցեաց բանկալները :